

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

07.08.2006թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Վ. Դանիելյան, Հ. Պետրոսյան, Գ. Գևորգյան, Յու. Պողոսյան, Ա. Աղազարյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)
Հրավիրված էին՝

Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Ջ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*), Դ. Մարտիրոսովա (*Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ*), Ա. Սաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում` ութ հարց.

1. Հայաստանի միգրացիայի հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Լ. Քալանթարյան/

2. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 1998/1999թթ. և 2001-2004թթ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետին տրամադրելու մասին.

/Ձեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1 Հաշվետվություն 2006թ. հունիսի 26-27-ը Լյուքսեմբուրգում Դրամական փոխանցումների Լյուքսեմբուրգյան խմբի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ.

/Ձեկուցող՝ Վ. Դանիելյան/

3.2 Հաշվետվություն 2006թ. հուլիսի 15-17-ը Ասիական Չարգացման Բանկի հետ համագործակցության շրջանակում «Մասնավոր փոխանցումները և աղքատությունը Կենտրոնական Ասիայում և Կովկասում» թեմայով առաջին աշխատանքային հանդիպմանը մասնակցության վերաբերյալ.

/Ձեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

4.Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. Հայաստանի միգրացիայի հետազոտության հարցաթերթը և լրացման ցուցումները հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Լ. Քալանթարյան/

Որոշեցին՝

Հաստատել Հայաստանի միգրացիայի հետազոտության հարցաթերթը և լրացման ցուցումները:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 1998/1999թթ. և 2001-2004թթ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետին տրամադրելու մասին.

/Չեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 1998/1999թթ. և 2001-2004թթ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները՝ տրամադրվող անվանագերծված տեղեկատվությունը զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1 Հաշվետվություն 2006թ. հունիսի 26-27-ը Լյուքսեմբուրգում Դրամական փոխանցումների Լյուքսեմբուրգյան խմբի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ.

/Չեկուցող՝ Վ. Դանիելյան/

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն 2006թ. հունիսի 26-27-ը Լյուքսեմբուրգում Դրամական փոխանցումների Լյուքսեմբուրգյան խմբի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

/Արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3.2 Հաշվետվություն 2006թ. հուլիսի 15-17-ը Ասիական Չարգացման Բանկի հետ համագործակցության շրջանակում «Մասնավոր փոխանցումները և աղքատությունը Կենտրոնական Ասիայում և Կովկասում» թեմայով առաջին աշխատանքային հանդիպմանը մասնակցության վերաբերյալ.

/Չեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն 2006թ. հուլիսի 15-17-ը Ասիական Չարգացման Բանկի հետ համագործակցության շրջանակում «Մասնավոր փոխանցումները և աղքատությունը Կենտրոնական Ասիայում և Կովկասում» թեմայով առաջին աշխատանքային հանդիպմանը մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

/Արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան